RUMELS MANAGEMENT SOLUTIONS

ՄԱՍ - 2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԱՐԿԱՅԻՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 2019-2020թթ.

Բովանդակություն

- Ներածություն 3
- Ընդհանուր վարկային պորտֆել 4
- Կորպորատիվ վարկային պորտֆել 7
- Մանրածախ վարկային պորտֆել 9
- Հիփոթեկային վարկային պորտֆել 11
- Վարկային պորտֆելի որակական ցուցանիշներ 13

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն հետազոտության նպատակն է վերլուծել Հայաստանի բանկերի վարկային պորտֆելը, ըստ բիզնես ուղղությունների (մանրածախ և կորպորատիվ վարկավորում): Նաև առանձին վերլուծվել է բանկերի հիփոթեկային վարկային պորտֆելը:

Ընդհանուր վարկային պորտֆելը ներկայացված է հաշվեկշռային արժեքով (հանած **արժեզրկման գծով պահուստը**), իսկ կորպորատիվ, մանրածախ և հիփոթեկային վարկային պորտֆելները ներկայացված են առանց արժեզրկման պահուստը հաշվի առնելու: Կորպորատիվ վարկային պորտֆելը ներառում է ֆակտորինգը և ֆինանսական լիզինգը:

Վարկային պորտֆելի որակը վերլուծված է օգտագործելով վարկերի **արժեզրկման պահուստի** և **արժեզրկման կորուստների** դինամիկան:

Հետազոտության հիմք են հանդիսացել Հայաստանի բանկերի կողմից հրապարակված ֆինանսական հաշվետվությունները, ինչպես նաև լրացուցիչ հարցումների պատասխանները:

Ընդհանուր վարկային պորտֆել

- Բանկային համակարգի ընդհանուր վարկային պորտֆելը աճել է 2020թ. **489 մլրդ ՀՀ դրամով**, կամ **13.7%**:
- Առ 31.12.2020 ընդհանուր վարկային պորտֆելը հավասար է **4.053 մլրդ ՀՀ դրամ** և կազմում է ընդհանուր ակտիվների **61%:**
- Ընդհանուր վարկային պորտֆելի տոկոսային արտահայտությամբ ամենաշատ աճը գրանցել են հետևյալ բանկերը - Մելլաթ բանկ **(53%),** Արմսվիսբանկ **(27.5%)** և Արդշինբանկ **(26.6%)**:

Բանկերի վարկային պորտֆելի դինամիկան 2019-2020 թթ. (մլն ՀՀ դրամ)



Ընդհանուր վարկային պորտֆել

- Ամենախոշոր **5** բանկերի *(Ամերիաբանկ, ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ, Արդշինբանկ, ԱԿԲԱ ԲԱՆԿ, Կոնվերս Բանկ)* ընդհանուր վարկային պորտֆելները կազմում են բանկային համակարգի ընդհանուր վարկային պորտֆելի **61.2%:**
- Ամենախոշոր **3** բանկերի *(Ամերիաբանկ, ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ, Արդշինբանկ)* ընդհանուր վարկային պորտֆելները կազմում են բանկային համակարգի ընդհանուր վարկային պորտֆելի **47.6%:**
- Ամերիաբանկ-ը ուներ ամենամեծ մասնաբաժինը – **17.2%**.

Ընդհանուր վարկային պորտֆելի կենտրոնացումը ըստ բանկերի - 31.12.2020



Ընդհանուր վարկային պորտֆել

- Առ 31.12.2020, բանկային համակարգի ընդհանուր վարկային պորտֆելի կառուցվածքը հետևյալն է – կորպորատիվ վարկային պորտֆել **(62.1%)** և մանրածախ վարկային պորտֆել **(37.9%)**
- Հետևյալ բանկերի ընդհանուր վարկային պորտֆելում մանրածախ վարկային պորտֆելը կազմում է ավելի քիչ, քան **30%:** *(ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ-**16%**, Արմսվիսբանկ-**16%**, Արցախբանկ-**17%**, Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան-**21%**, Ամերիաբանկ-**27%**):*
- Ընդհանուր վարկային պորտֆելում մանրածախ վարկային պորտֆելի ամենաշատ մասնաբաժինը առկա է ՎՏԲ-Հայաստան Բանկում **(81%):**

Վարկային պորտֆելի կառուցվածքը ըստ բիզնես ուղղությունների առ 31.12.2020 (%)



Կորպորատիվ վարկային պորտֆել

- Բանկային համակարգի կորպորատիվ վարկային պորտֆելը 2020թ. աճել է **333 մլրդ ՀՀ դրամով**, կամ **14.6%**:
- Առ 31.12.2020 կորպորատիվ վարկային պորտֆելը հավասար է **2.617 մլրդ ՀՀ դրամ** և կազմում է ընդհանուր վարկային պորտֆելի **62.1%:**
- Կորպորատիվ վարկային պորտֆելի (տոկոսային արտահայտությամբ) ամենաբարձր աճ գրանցել են հետևյալ բանկերը - Մելլաթ բանկ **(57%),** Արմսվիսբանկ **(35%)** և Արդշինբանկ **(30%)**:

Կորպորատիվ վարկային պորտֆելի դինամիկան 2019-2020 թթ. (մլն ՀՀ դրամ)



Կորպորատիվ վարկային պորտֆել

- Ամենախոշոր **5** բանկերի *(ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ, Ամերիաբանկ, Արդշինբանկ, ԱԿԲԱ ԲԱՆԿ և Կոնվերս Բանկ)* կորպորատիվ վարկային պորտֆելները կազմում են բանկային համակարգի կորպորատիվ վարկային պորտֆելի **65.4%:**
- Ամենախոշոր **3** բանկերի *(ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ, Ամերիաբանկ և Արդշինբանկ)* կորպորատիվ վարկային պորտֆելները կազմում են բանկային համակարգի կորպորատիվ վարկային պորտֆելի **55.5%:**
- *ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ-ը* ուներ ամենամեծ մասնաբաժինը – **20.8%**.

Կորպորատիվ վարկային պորտֆելի կենտրոնացումը ըստ բանկերի - 31.12.2020



Մանրածախ վարկային պորտֆել

- Բանկային համակարգի մանրածախ վարկային պորտֆելը 2020թ. աճել է **185 մլրդ ՀՀ դրամով**, կամ **13.1%**:
- Առ 31.12.2020 մանրածախ վարկային պորտֆելը հավասար է **1.599 մլրդ ՀՀ դրամ** և կազմում է ընդհանուր վարկային պորտֆելի **37.9%:**
- Մանրածախ վարկային պորտֆելի (տոկոսային արտահայտությամբ) ամենաբարձր աճ գրանցել են հետևյալ բանկերը - Մելլաթ բանկ **(52%),** ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ **(41%)** և Ամերիաբանկ **(30%)**:

Մանրածախ վարկային պորտֆելի դինամիկան 2019-2020 թթ. (մլն ՀՀ դրամ)



Մանրածախ վարկային պորտֆել

- Ամենախոշոր **5** բանկերի *(Արդշինբանկ, ԱԿԲԱ ԲԱՆԿ, Ամերիաբանկ, ՎՏԲ–Հայաստան Բանկ և Կոնվերս Բանկ)* մանրածախ վարկային պորտֆելները կազմում են բանկային համակարգի մանրածախ վարկային պորտֆելի **57.8%:**
- Ամենախոշոր **3** բանկերի *(Արդշինբանկ, ԱԿԲԱ ԲԱՆԿ, Ամերիաբանկ)* մանրածախ վարկային պորտֆելները կազմում են բանկային համակարգի մանրածախ վարկային պորտֆելի **39.4%:**
- Արդշինբանկ-ը ուներ ամենամեծ մասնաբաժինը – **14.2%**.

Մանրածախ վարկային պորտֆելի կենտրոնացումը ըստ բանկերի - 31.12.2020



Հիփոթեկային վարկային պորտֆել

- Բանկային համակարգի հիփոթեկային վարկային պորտֆելը 2020թ. աճել է **125 մլրդ ՀՀ դրամով** կամ **33.8%**:
- Առ 31.12.2020 մանրածախ հիփոթեկային պորտֆելը հավասար է **494 մլրդ ՀՀ դրամ** և կազմում է ընդհանուր մանրածախ վարկային պորտֆելի **31%:**
- Հիփոթեկային վարկային պորտֆելի (տոկոսային արտահայտությամբ) ամենաբարձր աճ գրանցել են հետևյալ բանկերը - Մելլաթ բանկ **(61%),** ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ **(59%)** և ՎՏԲ-Հայաստան բանկ **(53%)**:

Հիփոթեկային վարկային պորտֆելի դինամիկան 2019-2020 թթ. (մլն ՀՀ դրամ)



Հիփոթեկային վարկային պորտֆել

- Ամենախոշոր **5** բանկերի *(Ամերիաբանկ, Արդշինբանկ, Կոնվերս Բանկ, ԱԿԲԱ ԲԱՆԿ, Ինեկոբանկ)* հիփոթեկային վարկային պորտֆելները կազմում են բանկային համակարգի հիփոթեկային վարկային պորտֆելի **57.5%:**
- Ամենախոշոր **3** բանկերի *(Ամերիաբանկ, Արդշինբանկ, Կոնվերս Բանկ)* հիփոթեկային վարկային պորտֆելները կազմում են բանկային համակարգի հիփոթեկային վարկային պորտֆելի **46.5%:**
- Ամերիաբանկ-ը ուներ ամենամեծ մասնաբաժինը – **23.7%**.

Հիփոթեկային վարկային պորտֆելի կենտրոնացումը ըստ բանկերի - 31.12.2020



Վարկային պորտֆելի որակական ցուցանիշներ

- 2020թ. ընթացքում Հայաստանի բանկային համակարգը կատարել է մասհանումներ արժեզրկման պահուստին **114.2 մլրդ ՀՀ դրամ**, որը 2 անգամ ավել է, քան 2019թ.:
- Բացի ՎՏԲ-Հայաստան բանկից, բոլոր բանկերը ավելի շատ են հատկացրել արժեզրկման պահուստին 2020թ., քան կատարել էին 2019թ.:
- Հիմնականում, այս էական ծախսի աճի պատճառով է, որ Հայաստանի բանկային համակարգի շահույթը 2020թ. **19%** ավելի քիչ էր, քան 2019թ.:

Արժեզրկման գծով ծախսի դինամիկան 2019-2020 թթ. (մլն ՀՀ դրամ)

Բանկեր	Արժեզրկման գծով կորուստներ 2019	Արժեզրկման գծով կորուստներ 2020	Տարբերություն
Ամերիաբանկ	(7,201)	(17,883)	(10,682)
ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ	(11,344)	(17,781)	(6,437)
Արդշինբանկ	(10,614)	(13,273)	(2,659)
ԱԿԲԱ ԲԱՆԿ	(948)	(11,819)	(10,871)
Ինեկոբանկ	(5,578)	(10,246)	(4,668)
ՎՏԲ-Հայաստան Բանկ	(13,042)	(9,542)	3,500
Կոնվերս Բանկ	(1,204)	(6,391)	(5,187)
Յունիբանկ	(3,704)	(5,449)	(1,745)
Արցախբանկ	614	(5,332)	(5,946)
Արմսվիսբանկ	(769)	(4,709)	(3,940)
Էվոկաբանկ	(1,998)	(3,515)	(1,517)
ԱյԴի Բանկ	(137)	(2,727)	(2,590)
ԱրարատԲանկ	(40)	(2,355)	(2,315)
Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան	(494)	(1,750)	(1,257)
ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ	(360)	(649)	(289)
Մելլաթ բանկ	78	(465)	(542)
Բիբլոս Բանկ Արմենիա	44	(329)	(372)
Ընդամենը	**(56,696)**	**(114,214)**	**(57,518)**
			101%

Վարկային պորտֆելի որակական ցուցանիշներ

- Արժեզրկման գծով պահուստի մեծությունը աճել է 2020 թ. ընթացքում **25.3 մլրդ ՀՀ դրամով** կամ **19%-ով:**

- Հայաստանի բանկային համակարգի արժեզրման գծով պահուստի հարաբերակցությունը ընդհանուր վարկային պորտֆելին աճել է 4%-ով 2020 թ. կազմելով **3.82%:**

- Ենթադրվում է, որ Բանկերը պատրաստել են իրենց ֆինանսական հաշվետվությունները համաձայն ՖՀՄՍ:

Արժեզրկման գծով պահուստի դինամիկան 2019-2020 թթ. (մլն ՀՀ դրամ)

Բանկեր	Արժեզրկման գծով պահուստ 2019	Արժեզրկման գծով պահուստ 2020	Տարբերություն	% - արժեզրկման գծով պահուստի և ընդհանուր վարկային պորտֆելի 2019	% - արժեզրկման գծով պահուստի և ընդհանուր վարկային պորտֆելի 2020
Արցախբանկ	(1,873)	(6,390)	(4,517)	-1.8%	-5.2%
ՎՏԲ-Հայաստան Բանկ	(24,825)	(22,435)	2,389	-11.7%	-9.8%
Էվոկաբանկ	(2,957)	(4,090)	(1,133)	-2.8%	-3.5%
Ինեկոբանկ	(6,417)	(10,885)	(4,469)	-2.6%	-4.8%
ԱյԴի Բանկ	(10,906)	(7,588)	3,318	-12.1%	-7.2%
Բիբլոս Բանկ Արմենիա	(1,089)	(812)	277	-3.1%	-2.0%
Արմսվիսբանկ	(2,060)	(6,546)	(4,485)	-2.1%	-5.0%
Արդշինբանկ	(14,307)	(21,462)	(7,155)	-3.0%	-3.5%
ԱրարատԲանկ	(3,377)	(5,349)	(1,972)	-2.4%	-3.5%
ԱԿԲԱ ԲԱՆԿ	(7,666)	(14,083)	(6,417)	-2.5%	-4.2%
Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան	(5,106)	(6,918)	(1,813)	-4.1%	-4.6%
Յունիբանկ	(14,951)	(10,138)	4,813	-9.6%	-6.1%
ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ	(19,570)	(9,108)	10,462	-3.4%	-1.4%
Կոնվերս Բանկ	(4,674)	(9,129)	(4,455)	-2.0%	-3.8%
Ամերիաբանկ	(13,823)	(23,592)	(9,769)	-2.3%	-3.3%
ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ	(2,087)	(2,185)	(98)	-1.2%	-1.1%
Մելլաթ բանկ	(80)	(328)	(247)	-0.6%	-1.7%
Ընդամենը	**(135,768)**	**(161,038)**	**(25,271)**	**-3.67%**	**-3.82%**
			19%		**4%**

RUMELS MANAGEMENT SOLUTIONS

RUMELS Management Solutions

Ամիրյան 1 (Արմենիա Մարիոթ Հյուրանոց,
գրասենյակ N 320),
0010, Երևան, Հայաստան

Հեռ՝ +374 60 73 79 09
Էլ. հասցե՝ info@rumels.am
Կայք՝ www.rumels.am